ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հողամասի գոտևորման փոփոխությանը համաձայնություն տալու մասին որոշման նախագծի

Ավագանու որոշման նախագիծը կազմվել է Հողային օրենսգրքի 3-րդ և 7-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ և 64-րդ կետերի պահանջների համաձայն:

Նաիրի համայնքի ղեկավարին է դիմել «ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ի տնօրինությունը Նաիրի համայնքի պռոշյան գյուղում գտնվող, սեփականության իրավունքով «ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ին պատկանող 07-053-0379-0106 կադաստրային ծածկագրի 1,2168 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի մասով համայնքի տարածական պլանավորման փաստաթղի Պռոշյան գյուղի գոտևորման հատակագծում և տեքստային մասում՝ սահմանված հարկայնության ԲՆԿԳ 1/1-ը ԲՆԿԳ-4 գոտի փոփոխելու խնդրանքով: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-308 դրական եզրակացությունը՝ ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է արտացոլել այն Պռոշյան գյուղի գլխավոր հատակագծում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հողամասի գոտևորման փոփոխությանը համաձայնություն տալու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

«ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ին պատկանող հողամասի գոտևորման փոփոխության մասին որոշման ընդունումը Նաիրի համայնքի 2025 թվականի բյուջեում եկամուտների ավելացում չի ենթադրում:

Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի

պարտականությունները կատարող՝ Ա. Մովսեսյան